ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2392-Ա « 28 » հունիսի 2024թ.

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 25-Ի Հ.170-Ա ՈՐՈՇՄԱՆ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑԻ Հ.3/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել «Ավտոդաս» ՍՊԸ-ի դիմումը՝ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի, Անդրանիկի փողոցի հ.3/1 հասցեում գտնվող, ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոխելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 25.08.2009թ. հ.2753272 վկայականը, «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի 30.11.2023թ. հ.ՄՇ/43613, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 12.12.2023թ. հ.ԴԳ 8446, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի Երևանի գազաֆիկացման և գազամատակարարման մասնաճյուղի 29.11.2023թ. հ.Ն/53.13/47335-2023 գրությունները:

Քննարկվող հողամասն ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում և ըստ ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ հաստատված տարածագնահատման համաձայնեցված սխեմայի՝ գտնվում է 6-րդ գոտում:

Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի հունիսի 25-ի հ.170-Ա որոշմամբ՝ Երևան քաղաքի Անդրանիկի փողոցի հ.3/1 հասցեում գտնվող, «Ավտոդաս» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 1.1354հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը «արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության» հողերի կատեգորիայից փոխադրվել է «բնակավայրերի» հողերի կատեգորիա:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասով, 7-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով, Հայաստանի

Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի հ.1920-Ն որոշմամբ, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 21.12.2023թ. հ.Ն/70596-23 եզրակացությունը.

1. Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի, Անդրանիկի փողոցի հ.3/1 հասցեում գտնվող, «Ավտոդաս» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 1.1354հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը, Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի հունիսի 25-ի հ.170-Ա որոշման համապատասխան, սահմանել բնակավայրերի, իսկ գործառնական նշանակությունը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի հ.1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ բնակելի կառուցապատման:

2. Հողամասի նկատմամբ փոփոխված նպատակային և գործառնական նշանակություններով իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեում՝ համաձայն կից ներկայացվող նախագծման թույլտվության /ճարտարապետահատակագծային առաջադրանքի/:

3. Ընդունել ի գիտություն, որ.

1) «Շրջակա միաջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության» մասին օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի՝ նախատեսվող գործունեությունը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության.

2) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 07.06.2024թ. հ.03/25.3/2335-2024 գրության համաձայն, քննարկվող հողամասի եզրագծում և տարածքում առկա է տվյալ հասցեն սնող վերգետնյա գազատար և հաշվիչ հանգույց, ուստի կառուցապատման աշխատանքներ իրականացնելիս անհրաժեշտ է պահպանել ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 13-ի հ.539-Ն որոշմամբ հաստատված «Գազաբաշխման համակարգի անվտանգության և շահագործման կանոնները հաստատելու մասին» տեխնիկական կանոնակարգի նորմերը, խոչընդոտ հանդիսանալու դեպքում կառուցապատման աշխատանքներն իրականացնելուց առաջ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 08.07.2005թ. հ.95-Ն որոշմամբ հաստատված «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններ»-ի 2-րդ բաժնի 4-րդ գլխի թիվ 36 կետի համաձայն՝ իրականացնել նշված տարածքում առկա գործող գազատարի վերատեղադրում հողամասի սեփականատիրոջ կամ նախաձեռնողի միջոցներով, նախապես Երևանի ԳԳ մասնաճյուղից տեխնիկական պայմաններ ստանալու դեպքում.

3) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 03.06.2024թ. հ.ՔՂ/22.1/17808-2024 գրության համաձայն՝ քննարկվող տարածքով անցնում են «Շահումյան-1» ենթակայանից սնվող 6կվ լարման մալուխային գծեր, հետևաբար անհրաժեշտ է իրականացնել դրանց տեղափոխման աշխատանքները:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման, ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունների պետերի վրա:

6. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ